ISSN 2738-2664

ԱՐԴԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

MODERN PSYCHOLOGY
SCIENTIFIC BULLETIN

АКТУАЛЬНАЯ ПСИХОЛОГИЯ
НАУЧНЫЙ ВЕСТНИК

ԵՐԵՎԱՆ 2022, № 2 (11)

THE ADAPTATION OF THE ARMENIAN VERSION OF THE STUDENT'S PSYCHOLOGICAL WELL-BEING SCALE*

The study was carried out with the financial support of CL RA and RFFI
(Project №20RF-007, №20-513-05005/20)

Asriyan E.V., Karapetyan N.I. (Yerevan State University, Yerevan, Armenia)

Samokhvalova A.G. (Kostroma State University, Kostroma, Russia)

elina.asriyan@ysu.am, nare_karapetyan@ysu.am, a_samohvalova@ksu.edu.ru

Received: 28.06.2022

Revised: 11.07.2022

Accepted: 02.08.2022

DOI: https://doi.org/10.46991/SBMP/2022.5.2.003

The article is devoted to the choice of tools for assessing the psychological well-being of students and the description of the process of adapting the appropriate methodology. The paper discusses the conceptual foundations of the study of the phenomenon of well-being, theoretical approaches and research data of Armenian and foreign authors.

The experimental section presents the stages of choosing instruments for studying psychological well-being, the features of choosing methods and their adaptation. The analysis of the study data revealed the characteristic features of the indicator in question among Armenian and Russian students, based on the results obtained, the choice of tools and the corresponding stages of validation were substantiated. The research stages were analyzed taking into account the war and post-war problems on the Armenian and Russian sides.

A number of distinguishing features are presented, which were changed in other stages of research due to the Russian war.

***Keywords**: stress, psychological well-being, mental health, subjective well-being, validity, adaptation, war, pandemic.*

Հոգեբանական բարեկեցության հիմնախնդրի ուսումնասիրությունը ժամանակակից մի շարք գիտությունների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում: Ներկայումս բարեկեցության ֆենոմենն ակտիվ ուսումնասիրվում է փիլիսոփայության, բժշկության, ֆիզիոլոգիայի, մանկավարժության, սոցիոլոգիայի, հոգեբանության և այլ բնագավառներում: Դա է պատճառը, որ «բարեկեցություն»

* This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License. © The Author(s) 2022

հասկացությունն անընդհատ համալրվում է նոր իմաստային բնութագրիչներով [2, 14-16]: Վերջին տասնամյակում տեղի ունեցող տնտեսական և քաղաքական փոփոխություններն առավել արդիական և հրատապ են դարձրել հիմնախնդրի ուսումնասիրությունը:

Հիմնախնդրին նվիրված տեսությունների վերլուծությունը, թույլ տալիս առաջ քաշել ՀԲ հետևյալ սահմանումը. «Հոգեբանական բարեկեցությունը անձի հոգեվիճակների ինտեգրալ ցուցանիշն է, որն ապահովվում է հոգեկան գործընթացների և գործառույթների ներքին համաձայնեցվածությունը, ինչպես նաև ներքին հավասարակշռության և անձի ամբողջականության պահպանումը»: ՀԲ հիմնական ցուցանիշներն են երջանկության զգացումը և սեփական կյանքից բավարարվածությունը: Մեր ուսումնասիրությունների համաձայն՝ ուսանողի ՀԲ սուբյեկտիվ ցուցանիշներն են. ա) հոգեֆիզիոլոգիական մակարդակում՝ առողջությունը, կենսունակությունը, բ) անհատական հոգեբանական մակարդակում՝ ակադեմիական հաջողությունը, կյանքի ձեռքբերումները, ինքնահասկացումը, ինքնաընդունումը, գ) սոցիալ-հոգեբանական մակարդակում՝ բավարարվածությունը ռոմանտիկ և միջանձնային փոխհարաբերություններից:

Հոգեբանության մեջ, ՀԲ հետազոտությունների համատեքստում, առավել հայտնի է ՀԲ ուսումնասիրման Ն.Մ. Բրադբուրնի մոտեցումը, ով տվել է բարեկեցության սահմանումը և տարանջատել այն «հոգեկան առողջություն» հասկացությունից [8]: Հետագայում հոգեբանական բարեկեցությունն ուսումնասիրվել է տարաբնույթ խնդիրների տեսանկյունից՝ պանդեմիայի (Epishin, V. E., Salikhova, A. B., Bogacheva, N. V., Bogdanova, M. D., Kiseleva, M. G. (2020), նեգատիվ հույզերի և սթրեսի (Park, C. L., Finkelstein-Fox, L., Russell, B. S., Fendrich, M., Hutchison, M., & Becker, J. (2021), հույզերի դրսևորման (Huppert & Whittington, 2003; Ostir, Markides, Peek, & Goodwin, 2001), գլխուղեղի աջ և ձախ կիսագնդերի աշխատանքի առանձնահատկությունների (Davidson, 1992; Tomar-ken, Willer, 1992; Doss, 2004), մեկուսացման և լոքդաունի (O'Connor, R., Wetherall, K., Cleare, S., McClelland, H., Melson, A., Niedzwiedz, C., Robb, K., 2020), համալսարաններում հեռավար ուսուցման (Lukács, A., 2021), ինչպես նաև այլ բազմաթիվ գործոնների ազդեցության տեսանկյունից, ինչպիսիք են՝ քունը (Gulia, K.K., Kumar, V.M., 2020), եղանակը (Connolly, M., 2013), տարածաժամանակային խնդիրները և այլն [9]:

Երևույթի ուսումնասիրությունից անմասն չեն մնացել նաև հայ հեղինակները: Հետազոտությունները հատկապես մեծ արդիականություն ձեռք բերեցին Քովիդ–19 համաճարակից և 2020 թվականի արցախյան պատերազմից հետո:

Մի շարք հայ հեղինակներ անդրադարձ են կատարել այս կարևոր հոգեբանական ֆենոմենին՝ ուսումնասիրելով սուբյեկտիվ և հոգեբանական բարեկեցություն հասկացությունները քովիդի պայմաններում, հետպատերազմական շրջանում, լարված աշխատանքային կամ անբարենպաստ սոցիալական պայմաններում (Ավանեսյան Հ.Մ., Խաչատրյան Ն.Գ., Սերոբյան Ա.Կ.,Գրիգորյան

Ա.Կ., Հակոբջանյան Ա.Ռ.), ինչպես նաև՝ Հայաստանում և Ռուսաստանում ապրող ուսանողների հոգեբանական բարեկեցության հիմնական առանձնահատկությունները (Ասրիյան Է.Վ., Կարապետյան Ն.Ի., Հարությունյան Ն.Ա., Ստեփանյան Լ.Ս.) [6, 51-55], [10], [1, 189-198]: Նշված հետազոտությունները տարաբնույթ են և իրագործվում են տարբեր հետազոտական ծրագրերում: Դրանք հիմք են հանդիսանում ոչ միայն բարեկեցության ֆենոմենի նկարագրությանը և վերլուծությանը, այլև չափման գործիքակազմի մշակմանը: Մասնավորապես՝ Է. Ասրիյանի և Ա. Սամոխվալովայի գլխավորած գիտական խմբերի կողմից ձևավորվեց և տեղայնացվեց ՀԲ չափման հարցարան, որի տեղայնացման գործընթացի ներկայացմանը նվիրված են մի շարք գիտական հոդվածներ [3, 4, 5]:

Ակնհայտ է, որ որևէ հիմնախնդիր, հոգեբանական առանձնահատկություն ուսումնասիրելիս, առաջին հերթին առաջ է գալիս դրա գործիքակազմի ճիշտ ընտրության, տվյալների հավաստիության խնդիրը: Վերոնշյալն ավելի է կարևորվում հասարակական գիտություններում, քանի որ այս պարագայում մեծանում է մեկնաբանման և վերլուծության սուբյեկտիվության ռիսկը: Դա է պատճառը, որ հոգեբանական հետազոտություններ կազմակերպելիս, շատ մասնագետներ ընտրում են մի քանի համանման հետազոտական գործիքներ, որպեսզի կրկնակի ստուգման ենթարկեն ստացված արդյունքները և նվազեցնեն վերլուծության սուբյեկտիվիզմը, ստանան լայն կիրառելի, հավաստի արդյունքներ:

Հոգեբանական բարեկեցության ուսումնասիրման ընթացքում մենք հաշվի ենք առել հետևյալ երկու փաստերը.

1. ՀԲ կայուն միավոր չէ և կախված է մի շարք արտաքին և ներքին գործոնների ազդեցություններից:
2. Հոգեբանական բարեկեցության հետազոտման և չափման գործիքների ճիշտ ընտրության, ինչպես նաև վալիդ, հավաստի հետազոտական գործիքի մշակման համար, անհրաժեշտ է կատարել միջմշակութային հետազոտություններ:

Այսպիսով, ներկայացնենք այն հիմնական փուլերը, որոնցից կառուցվեց մեր հետազոտությունը:

1.Մեթոդական փաթեթի ընտրություն.

Առաջին փուլի հետազոտությանը կիրառվել են հետևյալ մեթոդիկաները՝

- Ի. Լ. Սոլոմինա - Գունավոր մետաֆորաների մեթոդիկա, 1997,
- Լյուբոմիրսկիյ Ս., Լեպպեր Խ. - Սուբյեկտիվ բարեկեցության սանդղակ, 2013,
- Ռիֆֆի (Լեպեշինսկիի ադապտացիա) - Հոգեբանական բարեկեցության սանդղակ, 2007,
- Ե. Դիններ, Ռ.Ա. Էմոնս, Ռ. Ջ. Լարսեն, Ս. Գրիֆինի (Դ. Լեոնտևայի և Ե. Օսինայի ադապտացիա) - Կյանքից բավարարվածության սանդղակ, 2003 [8],

- Մ. Բաբիք, Ե. Քոլիջ, Է. Դեյվիս - Նորարարական կոմպետենտության մեթոդիկա, 1999,
- Շեվելենկովա Տ., Ֆեսենկո Ֆ. - Անձի Հոգեբանական բարեկեցության բացահայտման հարցարան, 2005 [11]:

Մեթոդիկաները թարգմանվել են հոգեբանական թեստերի տեղայնացման չափանիշներին համապատասխան:

2. *Ընտրանք*: Ընտրվել են ՀՀ և ՌԴ տարածքներում գործող համալսարանների ուսանողական խմբեր, որոնք մասնակցել են նույն մեթոդական փաթեթով իրականացված հետազոտությանը: Ուսողներն ընտրվել են հաշվի առնելով քաղաքացիությունը և առաջատար գործունեության տեսակը: Մասնակից ուսանողների միջին տարիքը կազմում է՝ 22,5 տարեկան:
3. *Կատարվել է բազմափուլ միջմշակութային հետազոտություն*, որին ընդհանուր առմամբ մասնակցել են առաջին պիլոտային փուլում 486 [5, 39-43] և երկրորդ՝ հիմնական, փուլում՝ 500 ուսանող Հայաստանի և Ռուսաստանի տարբեր բուհերից:

Պիլոտային հետազոտական փուլից հետո, առաջին փուլում կատարված տվյալների հիման վրա ընտրվել են այն մեթոդիկաները, որոնք առավել համապատասխան են ուսանողների հոգեբանական բարեկեցության բացահայտման համար [5]: Քանի որ հետազոտության պիլոտային փուլը սկսել էր անմիջապես պատերազմից հետո, մենք մեր առջև ևս մեկ նպատակ էինք դրել պարզելու՝ արդյո՞ք պատերազմական իրադրությունը զգալի տարբերություն առաջացրել է հայ և ռուս ուսանողների հոգեբանական բարեկեցության մակարդակների դրսևորման վրա, ստացված արդյունքները փաստեցին, որ այդ տարբերությունը իսկապես արձանագրվում է, սակայն հետաքրքրական է այն փաստը, որ մեկ տարի անց երկու խմբի ուսանողների հետազոտման արդյունքները դարձել էին գրեթե համանման:

4. Հարցարանի մշակման փուլ: Հայ-ռուսական գիտական խմբի համատեղ հետազոտությունների հիման վրա հետազոտության հաջորդ փուլում գործընկեր ռուս հեղինակների կողմից ստեղծվել է ուսանողների հոգեբանական բարեկեցության բացահայտման «Ուսանողների հոգեբանական բարեկեցության գնահատման սանդղակ» (Սամոխվալովա Ա.Գ., Տիխոմիրովա Ե.Վ., Շիպովա Ն.Ս., Վիշնևսկայա Օ.Ն., 2022) մեթոդիկան, որի մշակման համար հիմք է հանդիսացել Ռիֆֆի հոգեբանական բարեկեցության սանդղակը, որը բաղկացած է 84 հարցից և 6 սանդղակից՝ դրական հարաբերություններ այլ մարդկանց հետ, ավտոնոմիա, շրջապատի կառավարում, անձնային աճ, կյանքի նպատակ և ինքնաընդունում [12]: Հարցարանը բաղկացած է 25 հարցից:

5. Հարցարանի տեղայնացման փուլ: Հարցարանը թարգմանվել է ռուսերենից հայերեն միաժամանակ մի քանի հոգեբան փորձագետների կողմից: Թեստային առաջադրանքի թարգմանության գործընթացում փորձել ենք զերծ մնալ բառացի թարգմանությունից՝ պահպանելով հասկացությունների իմաս-

տային բովանդակությունը և մշակութային համատեքստը: Այնուհետև դրան հաջորդել է պիլոտային փուլը, որից հետո փոփոխվել են որոշ ձևակերպումներ (մասնակից ուսանողների թիվը՝ 251 (n=251): Հետազոտական խմբի համասեռությունը պահպանվել է ըստ առաջատար գործունեության և զբաղվածության:

Տեղայնացման փուլում գործոնային վալիդության ստուգման նպատակով ստուգվել է, թե տրված հարցերը որքանով են արտացոլում թեստերի ներքին համաձայնեցվածությունը: Թեստերի ներքին փոխհամաձայնեցվածությունը չափվում է նրանով, թե որքանով են դրանք ուղղված նույն հատկանիշների չափմանը: Ստացված արդյունքները փաստում են, որ հայկական և ռուսական ընտրանքներում արված հետազոտությունների արդյունքները համանման են: Հետազոտության տվյալները հաշվարկվել են SPSS մաթ. վիճակագրական ծրագրային փաթեթի միջոցով: Թեստավորումն անցել է վալիդիզացիայի բոլոր փուլերը և հավաստի է:

Թեստի հավաստիությունը չափման է ենթարկվել Ալֆա Կրոնբախի գործակցի ցուցանիշի միջոցով: Հաշվարկը ցույց է տվել, որ մեթոդիկան հավաստի է, քանի որ Ալֆա Կրոնբախի գործակիցը՝ α=0,926, ինչը համարվում է հավաստիության լավ ցուցանիշ: Միջսանդղակային կոռելյացիան ցույց է տվել ներկայացուցչական ցուցանիշ՝ 0,21-0,34:

Ալֆա Կրոնբախի գործակիցը հաշվարկվել է նաև առանձին սանդղակների համար՝ աֆեկտիվ բաղադրիչ α=0,898, կոգնիտիվ՝ α=0,916, կոնատիվ՝ α=0,920, ռեֆլեքսիվ՝ α=0,903, արժեիմաստային բաղադրիչ՝ α=0,906:

Երկու թեստային առաջադրանքների կոռելյացիան ցույց է տվել, որ սանդղակների մեջ կա դրական կոռելյացիա և տեղայնացված մեթոդիկան չափում է ուսանողների բարեկեցության ինտեգրալ ցուցանիշը:

Ուսանողների հոգեբանական բարեկեցության չափման ամեն մի սանդղակի համար հաշվարկվել են ստանդարտ շեղման բարձր, միջին և ցածր սանդղակները:

Աղյուսակ 1. Ուսանողների հոգեբանական բարեկեցության սանդղակի ստանդարտ շեղում:

Descriptive Statistics

	N	Min.	Max.	Mean	Std. Deviation
Աֆեկտիվ բաղադրիչ	251	5	30	23.29	4.543
Կոգնիտիվ	251	6	47	23.59	4.418
Կոնատիվ	251	8	30	22.67	3.701
Ռեֆլեքսիվ	251	6	30	23.14	4.223
Արժեիմաստավորման	251	7	30	24.33	3.925
Valid N (listwise)	251				

Աղյուսակ 2. Ուսանողների հոգեբանական բարեկեցության բաղադրիչների սանդղակի միջինացված ցուցանիշներ:

Ստանդարտ սանդղակներ	Աֆեկտիվ	Կոգնիտիվ	Կոնատիվ	Ռեֆլեքսիվ	Արժեիմաս-տավորման
Ամենաբարձր	33-37	33-37	32-34	33-36	34-36
Միջինից բարձր	29-32	29-32	27-31	28-32	29-32
Միջին	19-28	19-28	19-26	19-27	18-28
Միջինից ցածր	14-18	15-18	16-18	15-18	16-27
Ամենացածր	7-13	10-14	12-15	10-14	13-15

Այսպիսով, ուսանողների հոգեբանական բարեկեցության սանդղակի մշակված և տեղայնացված տարբերակը համապատասխանում է հոգեախտորոշման գործիքներին ներկայացվող պահանջներին: Հուսալիության և վալիդության ցուցանիշները թույլ են տալիս հավաստելու, որ թեստը կարող է արդյունավետ կիրառվել ուսանողների ՀԲ չափման համար: Նշենք նաև, որ թեստային նորմերը նույնպես բավարարում են ստանդարտիզացիայի պահանջներին:

Գրականություն

1. **Հարությունյան Ն. Ա** Ուսանողի բարեկեցության սոցիալ-հոգեբանական որոշ առանձնահատկությունները կրթական միջավայրում, Արդի հոգեբանություն գիտական հանդես, 2021, N2(9), էջ 189-198: https://doi.org/10.46991/SBMP/2021.4.2.189
2. Дубровина, И. В. Психологическое благополучие школьников: учебное пособие для бакалавриата и магистратуры / И. В. Дубровина. — Москва: Издательство Юрайт, 2018. — 140 с, с.14-16.
3. **Самохвалова А.Г., Тихомирова Е.В., Вишневская О.Н., Шипова Н.С., Асриян Э.В.** Особенности психологического благополучия русских и армянских студентов // Социальная психология и общество, 2022. Том 13. № 2. с. 123–143. doi:10.17759/sps.2022130209.
4. **Самохвалова, А. Г., Тихомирова, Е. В., Вишневская, О. Н., Шипова, Н. С., Асриян, Э. В.** Структурно-функциональная модель психологического благополучия современных студентов. Российский психо-логический журнал, 2021, 18(4), с. 47–63. https://doi.org/10.21702/rpj.2021.4.4
5. **Asriyan E.V., Karapetyan N.I., Samokhvalova A.G.** Comparative Analysis of the Level of Psychological Well-Being Among RF and RA Students, *Wisdom*, vol. 21, no. 1, pp. 39-43, Mar. 2022,

https://www.wisdomperiodical.com/index.php/wisdom/article/view/686/438
6. **Avanesyan H.M., Asriyan E.V.** Personal Potential In Overcoming The Socio-Psychological Consequences Of War And Pandemic, Modern Psychology Scientific Bulletin 2021, N2(9), pp. 51-55: https://doi.org/10.46991/SBMP/2021.4.2.051
7. **Bradburn N.M.** The structure of psychological wellbeing. Chicago: Aldine Pub. Co., 1969. 320 p.
8. **Diener E, Oishi S, & Lucas R. E**. (2003) Personality, culture, and subjective well-being: Emotional and cognitive evaluations of life. Annual Review of Psychology, 54, pp. 403-425. https://doi.org/10.1146/annurev.psych.54.101601.145056
9. **Huppert F.A.** Psychological Well-being: Evidence Regarding its Causes and Consequences, **https://doi.org/10.1111/j.1758-0854.2009.01008.x**
10. **Serobyan A. K. Grigoryan A.K, Khachatryan N. G.** Gender Differences Of Cognitive And Motivational Predictors Of Student's Psychological Well-Being https://doi.org/10.46991/SBMP/2022.5.1.107
11. **Shevelenkova T., Phesenko P.** (2005) Oprosnik issledovaniya psihologicheskogo blagopoluchiya lichnosti (Questionnaire of study of the psychological well-being of the personality, in Russian). Retrieved from https://psylab.info/????? ??????????????? ???????????? ????
12. http://surl.li/cuwbp-Шкала психологического благополучия Рифф.

ՈՒՍԱՆՈՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՍԱՆԴՂԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ

Ասրիյան Է. Վ., Կարապետյան Ն. Ի. (Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստան)
Սամոխվալովա Ա. Գ. (Կոստրոմայի պետական համալսարան, Կոստրոմա, Ռուսաստան)

Հոդվածը նվիրված է ուսանողների հոգեբանական բարեկեցության երևույթի գնահատման գործիքակազմի ընտրությանը և դրա տեղայնացման գործընթացի նկարագրությանը: Աշխատանքում քննարկվում են բարեկեցության ուսումնասիրման հայեցակարգային դրույթներ, հայ և արտասահմանյան հեղինակների տեսական մոտեցումներ և հետազոտական տվյալներ:

Փորձարարական մասում ներկայացված են հոգեբանական բարեկեցության ուսումնասիրման գործիքակազմի ընտրության փուլերը, մեթոդիկաների ընտրության և դրանց տեղայնացման առանձնահատկությունները: Հետազոտական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս հայկական և ռուսական բուհերի ուսանողներին բնորոշ տարբերակիչ առանձնահատկությունները, որոնց հիման վրա տեղի է ունեցել գործիքակազմի ընտրությունը և համապատասխան

վալիդիզացիայի փուլերը: Հետազոտական փուլերը վերլուծվել են հաշվի առնելով պատերազմական և հետպատերազմական խնդիրները հայկական և ռուսական կողմերի մոտ:

Ներկայացված են մի շարք տարբերակիչ առանձնահատկություններ, որոնք ռուսական պատերազմով պայմանավորված հետազոտական մյուս փուլերում փոփոխվել են:

Հանգուցային բառեր՝ *սթրես, հոգեբանական բարեկեցություն, հոգեկան առողջություն, սուբյեկտիվ բարեկեցություն, վալիդություն, ադապտացիա, պատերազմ, համաճարակ:*

АДАПТАЦИЯ АРМЯНСКОЙ ВЕРСИИ ШКАЛЫ ПСИХОЛОГИЧЕСКОГО БЛАГОПОЛУЧИЯ СТУДЕНТА

Асриян Э.В., Карапетян Н.И. (Ереванский государственный университет, Ереван, Армения)

Самохвалова А.Г. (Костромской государственный университет, Кострома, Россия)

Статья посвящена описанию процесса адаптации методики оценки психологического благополучия. В работе обсуждаются концептуальные основы изучения феномена благополучия, теоретические подходы и данные исследования армянских и зарубежных авторов.

В экспериментальном разделе статьи представлены все этапы исследования: выбор инструментов исследования психологического благополучия, их адаптация и валидизация. Анализ данных исследования выявил характерные отличительные особенности рассматриваемого показателя у армянских и русских студентов.

Ключевые слова: *стресс, психологическое благополучие, психическое здоровье, субъективное благополучие, валидность, адаптация, война, пандемия.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ASRIYAN E.V., KARAPETYAN N.I., SAMOKHVALOVA A.G. THE ADAPTATION OF THE ARMENIAN VERSION OF THE STUDENT'S PSYCHOLOGICAL WELL-BEING SCALE 3

Ասրիյան Է. Վ., Կարապետյան Ն. Ի., Սամոխվալովա Ա. Գ. ՈՒՍԱՆՈՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՍԱՆԴՂԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ .....
Асриян Э.В., Карапетян Н.И., Самохвалова А.Г. АДАПТАЦИЯ АРМЯНСКОЙ ВЕРСИИ ШКАЛЫ ПСИХОЛОГИЧЕСКОГО БЛАГОПОЛУЧИЯ СТУДЕНТА .....

AVANESYAN H. M., ASRIYAN E. V., PAPOYAN S. A. THE MAIN CHARACTERISTICS OF PERSON'S SELF-REGULATION IN THE PROCESS OF PROVIDING THE PSYCHOLOGICAL WELLBEING DURING COVID-19 11

Аванесян Г. М., Асриян Э. В., папоян с.а. ОСНОВНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ САМОРЕГУЛЯЦИИ ЛИЧНОСТИ В ПРОЦЕССЕ ОБЕСПЕЧЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКОГО БЛАГОПОЛУЧИЯ В УСЛОВИЯХ COVID-19 .....
Ավանեսյան Հ. Մ., Ասրիյան Է. Վ., Պապոյան Ս. Ա. ԱՆՁԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ COVID-19 ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ .....

GRIGORYAN SH. S. ANALYSIS OF THE PERSPECTIVES OF NEUROMARKETING RESEARCH OF CONSUMER BEHAVIOR 18

Գրիգորյան Շ. Ս. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՆԵՅՐՈՄԱՐԿԵԹԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .....
Григорян Ш. С. АНАЛИЗ ПЕРСПЕКТИВ НЕЙРОМАРКЕТИНГОВЫХ ИССЛЕДОВАНИЙ ПОТРЕБИТЕЛЬСКОГО ПОВЕДЕНИЯ .....

GEVORGYAN D. E., ASRIYAN E. V. STUDY OF PSYCHOPATHOLOGICAL MANIFESTATIONS OF WAR VETERANS 28

Գևորգյան Դ. Է., Ասրիյան Է. Վ. ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ .....
Геворгян Д. Э., Асриян Э. В. ИЗУЧЕНИЕ ПСИХОПАТОЛОГИЧЕСКИХ ПРОЯВЛЕНИЙ ВЕТЕРАНОВ ВОЙНЫ .....

TARJUMANYAN S. V. MEANING-LIFE ORIENTATIONS AMONG PEOPLE WITH PARENTAL DEPRIVATION IN CHILDHOOD 41

Թարջումանյան Ս. Վ. ԿԵՆՍԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ ԴԵՊՐԻՎԱՑԻԱ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄՈՏ .....
Тарджуманян С. В. СМЫСЛО-ЖИЗНЕННЫЕ ОРИЕНТАЦИИ У ЛЮДЕЙ С РОДИТЕЛЬСКОЙ ДЕПРИВАЦИЕЙ В ДЕТСКОМ ВОЗРАСТЕ.....

HARUTYUNYAN N. A. PSYCHOLOGICAL ANALYSIS OF THE PROBLEM OF WOMEN'S SOCIAL ACTIVITY IN THE CONTEXT OF FAMILY STABILITY..... 49

Арутюнян Н. А. ПСИХОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНОЙ АКТИВНОСТИ ЖЕНЩИН В УСЛОВИЯХ СТАБИЛЬНОСТИ СЕМЬИ.....
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ն. Ա. ԿՆՈՋ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ .....

SARGSYAN A. A., PAPOYAN V. R. PSYCHOLOGICAL PERCEPTION OF A POLITICAL LEADER IN MODERN SOCIETY..... 57

Սարգսյան Հ. Ա., Պապոյան Վ. Ռ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԿԵՐՊԱՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱՐԳՈՒՄ .....
Саргсян А. А., Папоян В. Р. ПСИХОЛОГИЧЕСКОЕ ВОСПРИЯТИЕ ПОЛИТИЧЕСКОГО ЛИДЕРА В СОВРЕМЕННОМ ОБЩЕСТВЕ.....

MNATSAKANYAN L. R., GALSTYAN M. V. ETHNIC NETWORKS IN REPRESENTATIONS OF PERMANENT RESIDENT MIGRANTS' FAMILY MEMBERS LIVING IN ARMENIA 67

Մնացականյան Լ. Ռ., Գալստյան Մ. Վ. ԷԹՆԻԿ ՑԱՆՑԸ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԾ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ .....
Мнацаканян Л. Р., Галстян М. В. ЭТНИЧЕСКАЯ СЕТЬ В ПРЕДСТАВЛЕНИЯХ ПРОЖИВАЮЩИХ В АРМЕНИИ ЧЛЕНОВ СЕМЕЙ ПОСТОЯННЫХ МИГРАНТОВ.....

VARDANYAN K. E. THE CHARACTERISTICS OF SUICIDAL AND NON-SUICIDAL SELF-INJURIOUS BEHAVIORS IN CHILDREN AND ADOLESCENTS..... 75

Վարդանյան Կ.Ե. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍՈՒԻՑԻԴԱԼ ԵՎ ՈՉ ՍՈՒԻՑԻԴԱԼ ԻՆՔՆԱՎՆԱՍՄԱՆ ՎԱՐՔԱՁԵՎԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....
Варданян К.Е. ОСОБЕННОСТИ СУИЦИДАЛЬНОГО И НЕСУИЦИДАЛЬНОГО САМОПОВРЕЖДАЮЩЕГО ПОВЕДЕНИЯ У ДЕТЕЙ И ПОДРОСТКОВ .....